ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 2

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քաղաքացի Սևակ Սարգսյանի և «Սմարթ Մոբայլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվեց ծառայությունների վճարովի մատուցման գրավոր պայմանագիր, որով Ընկերությունը պարտավորվեց վերանորոգել Սևակ Սարգսյանին պատկանող "HP" մակնիշի համակարգիչը, իսկ Սևակ Սարգսյանը պարտավորվեց վճարել ծառայությունների դիմաց: Պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերությունը վերանորոգեց համակարգիչը և Սևակ Սարգսյանին առաջարկեց կատարել պայմանագրով նախատեսված վճարումը: Սակայն Սևակ Սարգսյանը հրաժարվեց վճարել՝ պատճառաբանելով, որ համակարգչի անսարքություններն ամբողջությամբ վերացված չեն:

Ընկերությունը դիմեց դատարան՝ պահանջելով Սևակ Սարգսյանից հօգուտ իրեն բռնագանձել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված գումարը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վերադարձրեց Ընկերության հայցը: Որպես հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման իրավական հիմք՝ դատարանի կողմից վկայակոչվեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (հայցվորի կողմից չեն պահպանվել հայցադիմումի ձևին, բովանդակությանը, կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները): Դատարանը նշեց, որ Ընկերությունը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջները, քանի որ հայցադիմումի մեջ նշված չէ պատասխանող Սևակ Սարգսյանի հայրանունը: Դատարանը նաև նշեց, որ թեև հայցադիմումի մեջ նշվել է հայցվոր Ընկերության գտնվելու վայրի հասցեն և հայցվորի ներկայացուցիչ փաստաբան Վահան Մարտիրոսյանի ծանուցման հասցեն, սակայն հայցադիմումը չի պարունակում հայցվոր Ընկերության ծանուցման հասցեն կամ նշում առ այն, որ հայցվոր Ընկերության գտնվելու վայրի և ծանուցման հասցեները համընկնում են: Հայցադիմումի թերությունները վերացնելու համար դատարանն Ընկերությանը տրամադրեց եռօրյա ժամկետ՝ սկսած որոշումը ստանալու պահից:

Եռօրյա ժամկետում Ընկերությունը վերացրեց դատարանի կողմից մատնանշված թերությունները և հայցադիմումը կրկին ներկայացրեց դատարան: Դատարանը Ընկերության հայցադիմումն ընդունեց վարույթ և նշանակեց նախնական դատական նիստ:

Նախնական դատական նիստի ընթացքում Սևակ Սարգսյանը առարկեց հայցի դեմ՝ պատճառաբանելով, որ հայցվոր Ընկերության կողմից ամբողջությամբ չեն վերացվել իր համակարգչի անսարքությունները (ծառայությունը պատշաճ որակով մատուցված չէ): Սևակ Սարգսյանը նշեց նաև, որ բազմաթիվ այլ անձինք դժգոհ են հայցվոր Ընկերության մատուցած ծառայությունների որակից, թեև ինքը չի կարող ներկայացնել այդ փաստը հաստատող ապացույցներ: Իսկ հայցվոր Ընկերությունը պնդեց, որ ծառայությունները մատուցվել են ամբողջությամբ և պատշաճ որակով: Դատարանը կողմերի հետ քննարկեց ապացուցման ենթակա փաստերի շրջանակը և կայացրեց ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում: Համաձայն դատարանի որոշման՝ Հայցվոր Ընկերությունը պետք է մասնավորապես ապացուցեր այն փաստերը, որ Ընկերության կողմից Սևակ Սարգսյանին մատուցվել են համակարգչի վերանորոգման ծառայություններ, և այդ ծառայությունները մատուցվել են պատշաճ որակով: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ դատարանը մատնանշեց ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-299(ՏԴ) և թիվ

ԵՇԴ/0681/02/08 քաղաքացիական գործերով կայացված որոշումները, որոնցով ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ ծառայության մատուցված լինելու հանգամանքի և այն պատշաճ որակով մատուցված լինելու հանգամանքի ապացուցման բեռը ամբողջությամբ կրում է կատարողը (տվյալ դեպքում՝ հայցվոր Ընկերությունը):

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելով՝ դատարանը կողմերին տրամադրեց վերջնական ժամկետ՝ ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու համար:

Նույն նախնական դատական նիստի ընթացքում դատարանը հայցվոր Ընկերությունից պահանջեց նաև դատարանին ներկայացնել իր և Սևակ Սարգսյանի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի բնօրինակը, քանի որ հայցադիմումին կից ներկայացվել էր դրա «հասարակ» (պատշաճ չվավերացված) պատճենը: Հայցվոր Ընկերության ներկայացուցիչը հրաժարվեց ներկայացնել պայմանագրի բնօրինակը (պատճառաբանելով, որ այն կորել է), սակայն դատարանին ներկայացրեց պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը: Դատարանը հայտարարեց, որ կասկածներ ունի պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենի իսկության վերաբերյալ, ուստի այն, ինչպես նաև պայմանագրի «հասարակ» (պատշաճ չվավերացված) պատճենը հանում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Նույն նախնական դատական նիստի ընթացքում Սևակ Սարգսյանը դատարանին միջնորդեց նշանակել փորձաքննություն՝ պարզելու համար այն հարցը, թե արդյոք իր համակարգիչը հայցվոր Ընկերության կողմից պատշաճ կերպով վերանորոգվել է: Դատարանը բավարարեց Սևակ Սարգսյանի միջնորդությունը՝ փորձաքննության կատարումը հանձնարարելով «Փորձագետ» ՍՊԸ-ին: Գործի վարույթը կասեցվեց:

Երեք ամիս անց դատարանը ստացավ «Փորձագետ» ՍՊԸ-ի կողմից կազմված գրավոր եզրակացությունը, որի «Առաջադրված հարցերի պատասխաններ» բաժնում նշված էր հետևյալը. *«Համաձայն Սևակ Սարգսյանի բացատրության, համակարգիչը, «Սմարթ Մոբայլ» ՍՊԸ-ի սպասարկման կենտրոնից հետո ստացվելուց հետո, լրացուցիչ վերանորոգվել է մեկ այլ մասնագետի կողմից: Ներկա պահին այն թերություններ չունի: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգիչը «Սմարթ Մոբայլ» ՍՊԸ-ի սպասարկման կենտրոնից հետո ստացվելուց հետո հանձնվել է այլ մասնագետի, ով վերանորոգել է համակարգչի էկրանը, կարող ենք եզրահանգել, որ առավել հավանական է, որ Սևակ Սարգսյանի համակարգչի էկրանը «Սմարթ Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից պատշաճ կերպով չի վերանորոգվել»:*

Դատարանի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվեց և նշանակվեց ևս մեկ նախնական դատական նիստ: Քանի որ գործին մասնակցող անձանց կողմից նոր ապացույցներ և միջնորդություններ չներկայացվեցին, դատարանը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, որոշում կայացրեց գործը դատաքննության նշանակելու մասին, որում նշվեցին դատական նիստի ժամանակը և վայրը:

Դատաքննության ընթացքում կողմերը պնդեցին իրենց պահանջները և առարկությունները, իսկ դատարանը հետազոտեց գործում առկա ապացույցները: Այնուհետև դատարանը գործի դատաքննությունը հայտարարեց ավարտված և հայտարարեց վճռի հրապարակման ժամանակը և վայրը:

Գործի քննության արդյունքում դատարանը վճռեց Ընկերության հայցը մերժել: Դատարանի վճռի «Գործի քննությամբ հաստատված փաստերը» բաժնում դատարանը հաստատված էր համարել նաև Սևակ Սարգսյանի վկայակոչած այն փաստը, որ բազմաթիվ անձինք դժգոհ են մնացել «Սմարթ Մոբայլ» ՍՊԸ-ի մատուցած ծառայությունների որակից:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Գնահատե՛ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման օրինականությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Գնահատե՛ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Գնահատե՛ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գործողությունները՝ ծառայությունների մատուցման պայմանագրի բնօրինակը պահանջելու և այդ պայմանագրի «հասարակ» (պատշաճ չվավերացված) պատճենն ու դրա նոտարական կարգով վավերացված պատճենը հետազոտման ենթակա ապացույցների շարքից հանելու մասով: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 4.

Գնահատե՛ք «Փորձագետ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության ապացուցողական նշանակությունը: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Արդյո՞ք իրավական խնդրի վերջին պարբերությունում նշված և դատարանի վճռով հաստատված փաստը կարող է հետագայում լինել նախադատելի: Եթե այո, ապա ինչպիսի՞ իրավիճակ(ներ)ում կարող է այն լինել նախադատելի: Հիմնավորե՛ք պատասխանը: